

**«Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 22 հոդվածով նախատեսված դեպքերում հարկային մարմնի<sup>\*2),\*3)</sup> կողմից հարկվող օբյեկտների և հարկային պարտավորությունների<sup>\*2)</sup> հաշվարկման (գնահատման) կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շուկայական (սովորաբար կիրառվող) գները որոշելու մասին**

Հաշվի առնելով «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 20, 26, 28, «Ավելացված արժեքի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 8 հոդվածների և «Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 53 հոդվածի 3-րդ կետի պահանջները, ինչպես նաև հիմք ընդունելով «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 22 հոդվածը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 22 հոդվածով նախատեսված դեպքերում հարկային մարմնի<sup>\*2),\*3)</sup> կողմից հարկվող օբյեկտների և հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման) կարգը (կցվում) է:

2. Սահմանել, որ

ա) սույն որոշմամբ հաստատված կարգի վերաբերյալ գերատեսչական նորմատիվային ակտերն ընդունում է հարկային մարմինը<sup>\*2),\*3)</sup>.

բ) սույն որոշմամբ նախատեսված կարգի 3-րդ բաժնի 1-ին ենթաբաժնում նշված տվյալները (տեղեկությունները) կարող են հիմք ընդունվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների (ակտիվների) շուկայական (սովորաբար կիրառվող) գների չափը գնահատելու համար.

գ) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն<sup>\*3)</sup> իր կողմից իրականացվող դիտարկման (մոնիտորինգ) արդյունքներով, սույն որոշմամբ հաստատված կարգի կիրառման նպատակով, հարկային մարմնին<sup>\*2),\*3)</sup> տրամադրում է տեղեկատվություն՝

- յուրաքանչյուր ամիս, մինչև հաջորդ ամսվա 25-ը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սպառողական շուկայում ապրանքների (ծառայությունների, այլ ակտիվների) գործող գների (սակագների վերաբերյալ, նշելով այդ ապրանքների (ծառայությունների և այլ ակտիվների) դասակարգման ծածկագիրը (կոդ), բացառությամբ սույն որոշման հավելվածում նշված ապրանքների (ակտիվների) գործող գների.

-յուրաքանչյուր ամիս, տասնօրյա կտրվածքով, մինչև հաջորդ ամսվա 10-ը՝ սույն որոշման հավելվածում նշված ապրանքների (ակտիվների) գործող գների վերաբերյալ:

3. Սույն որոշումն կիրարկել 1999 թվականի սեպտեմբերի 1-ից, իսկ 1-ին կետում նշված կարգի դրույթները 1998 թվականի հունվարի 1-ից:

## Կ Ա Ր Գ

«Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 22 հոդվածով նախատեսված դեպքերում *հարկային մարմնի*<sup>\*2),\*3)</sup> կողմից հարկվող օբյեկտների և հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման)

### Բաժին 1. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգը կիրառվում է «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 22 հոդվածով նախատեսված դեպքերում *հարկային մարմնի*<sup>\*2),\*3)</sup> կողմից հարկվող օբյեկտների և հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման, *վերագնահատման*<sup>\*2)</sup>) ժամանակ:

2. Սույն կարգի իմաստով՝

ա) «ակտիվների շարժ (օգտագործում)» է համարվում այլ ակտիվների ավելացման, պարտավորությունների նվազման, հարկվող օբյեկտի հաշվարկման ժամանակ, *հաշվի առնվող նվազեցումների և*<sup>\*2)</sup> հաշվի չառնվող նվազեցումների հանրագումարը.

բ) «ակտիվների առաջացման աղբյուր» է համարվում այլ ակտիվների նվազման, պարտավորությունների ավելացման (աճի) չհարկվող եկամտի (շահույթի) հանրագումարը.

գ) «շահագրգռվածության հիման վրա կատարված (կնքված) գործարքներ» են համարվում այն գործարքները, որոնք կատարվել (կնքվել) են՝

հարկ վճարողի և այդ հարկ վճարողի կախյալ հարկ վճարողի միջև՝ առանց «բացված ձեռքի սկզբունքի» պահպանման:

Սույն կարգի կիրառման առումով՝ հարկ վճարողը մեկ այլ (հիմնական) հարկ վճարողի նկատմամբ համարվում է կախյալ հարկ վճարող, եթե հիմնական հարկ վճարողն ունի օրենքով չարգելված ձևով մյուս հարկ վճարողի որոշումները կանխորոշելու իրավունք.

Այն հարկ վճարողների միջև, որոնց որոշումները կանխորոշելու իրավունք ունեցողը միևնույն հարկ վճարողն է, կամ (որոշումները կանխորոշելու իրավունք ունեցող հարկ վճարողի ֆիզիկական անձ լինելու դեպքում) նրանց ամուսինները, ծնողները, երեխաները, քույրերը, եղբայրները այլ հարազատները և ազգականները:

«Բացված ձեռքի սկզբունքը» համարվում է չպահպանված, եթե *հարկային մարմնի*<sup>\*3)</sup> կողմից կատարված վերլուծությունները և համադրումներն ապահովում են փաստարկներ՝ եզրակացնելու համար, որն, ըստ էության, տեղի է ունեցել գների տրանսֆեր (հարկվող օբյեկտների կարգավորման, հարկային պարտավորությունների պլանավորման նպատակով գների նպատակային ձևակերպում) համանման պայմաններում և հանգամանքներում այլ երկու անկախ հարկ վճարողների միջև սովորաբար կիրառվող գներից տարբերվող, *իսկ ներմուծված ապրանքների դեպքում՝ նաև մաքսային արժեքից ցածր*<sup>\*2)</sup> գներով (*բացառությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հարկ վճարողների կողմից գնային գեղչերի կիրառման դեպքերի*)<sup>\*2)</sup> գործարքի կատարման ձևով:

3. Սույն կարգի իմաստով «ակտիվներ», «պարտավորություններ», «պարտավորությունների նվազում», «նվազեցումներ» հասկացություններն ունեն նույն իմաստը, ինչ «Շահութահարկի մասին» և «Եկամտային հարկի մասին»<sup>\*3)</sup> Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներում:

### Բաժին 2. Հարկային մարմնի<sup>\*3)</sup> կողմից հարկվող օբյեկտների և հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման) հաջորդականությունը

4. Հարկ վճարողի կողմից հարկվող օբյեկտների գծով հաշվապահական հաշվառման (Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային օրենսդրությամբ կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում՝ նաև այլ հաշվառման և (կամ) գրանցումների (այսուհետև՝ գրանցումներ) վերաբերող), սահմանված փաստաթղթերի բացակայության, այդ փաստաթղթերը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չներկայացնելու (այդ թվում ստուգումների (ուսումնասիրությունների)

իրականացման ժամանակ), հարկվող օբյեկտների գծով հաշվապահական հաշվառման (գրանցումներին վերաբերող) փաստաթղթերը սահմանված կարգի կոպիտ խախտումներով վարելու, *հարկային մարմինն*<sup>\*2),\*3)</sup> ներկայացրած հաշվետվություններում, հաշվարկներում, հայտարարագրերում և այլ փաստաթղթերում ակնհայտ կեղծ տվյալներ մտցնելու դեպքում (մասնավորապես) շահագրգռվածության հիման վրա կնքված գործարքների դեպքում, երբ գործարքները կնքվում են առանց «բացված ձեռքի սկզբունքի» պահպանման, ինչպես նաև այն դեպքերում, երբ պահպանված չեն հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու սկզբունքները, հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները (բացառությամբ հաստատագրված վճարներով հարկվող գործունեության ոլորտների համար) հաշվարկում է *հարկային մարմինը*<sup>\*3)</sup> հետևյալ հաջորդականությամբ՝

- ա) ելակետային չափերի որոշման համար անհրաժեշտ վերլուծության կատարում.
- բ) հարկվող օբյեկտների և հարկային պարտավորությունները հաշվարկելու (գնահատելու, վերագնահատելու) համար անհրաժեշտ ելակետային չափերի որոշում.
- գ) հարկվող օբյեկտի հաշվարկում (գնահատում, վերագնահատում), դրանից բխող հարկային պարտավորությունների հաշվարկում (գնահատում և վերագնահատում) և արդյունքների ձևակերպում:

### **Բաժին 3. Ելակետային չափերի որոշման համար անհրաժեշտ վերլուծության կատարումը և հարկվող օբյեկտների ու հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման, վերագնահատման) համար անհրաժեշտ ելակետային չափերի որոշումը**

5. Ելակետային չափերի որոշումը հարկ վճարողի իրականացրած գործունեության արդյունքում ակտիվների (միջոցների շարժի (օգտագործման) և ակտիվների առաջացման (գոյացման) աղբյուրների իրական չափերի մնացորդների գնահատումն ու որոշումն է):

Ելակետային չափերը որոշելու նպատակով կատարվող վերլուծության ժամանակ *հարկային մարմինն*<sup>\*3)</sup> օգտագործվում են սույն բաժնում նշված տվյալների անհրաժեշտ աղբյուրները ելակետային չափերին առավել ճշգրիտ գնահատական տալու համար,

Տվյալների տարբեր աղբյուրների կիրառման ժամանակ իրարից զգալիորեն տարբերվող արդյունքներ ստանալու դեպքում, *հարկային մարմինը*<sup>\*3)</sup> տվյալների այլ աղբյուրների ընդգրկման անհնարինության (բացակայության) դեպքում իրականացնում է ընտրված աղբյուրներով կատարված վերլուծության մեթոդներից յուրաքանչյուր առավելությունների գնահատում և ընտրում տվյալ հանգամանքներում առավել իրատեսական գնահատականը:

Սույն կետում նշված կարգով և սույն կարգի 6-րդ կետի «բ», «գ», «դ» ենթակետերում նշված աղբյուրների օգտագործմամբ ելակետային տվյալների չափերի որոշման հիման վրա հարկ վճարողի հարկվող օբյեկտների և հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման, վերագնահատման) մասին որոշումը (եզրակացությունը) ընդունում է առնվազն *հարկային մարմին*<sup>\*2),\*3)</sup> *կառուցվածքային*<sup>\*3)</sup> ստորաբաժանման ղեկավարի (*հարկային մարմին*<sup>\*2),\*3)</sup> համապատասխան գործառնությունների իրականացնելու իրավասություն ունեցող կառուցվածքային ստորաբաժանման բաժնի պետի) պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձը:

#### **Ենթաբաժին 3.1. Ակտիվների շարժի (օգտագործման) չափի մնացորդի որոշումը**

6. Հաշվետու (ստուգվող) ժամանակաշրջանի համար ակտիվների շարժի (օգտագործման) (այլ ակտիվների ավելացման (աճի), պարտավորությունների նվազման, հարկվող օբյեկտի հաշվարկման ժամանակ հաշվի առնվող նվազեցումների, հարկվող օբյեկտի հաշվարկման ժամանակ հաշվի չառնվող նվազեցումների հանրագումար) չափի մնացորդի որոշման համար հիմք է ընդունվում՝

ա) հարկ վճարողի ներկայացրած սկզբնական հաշվառմանը, գրանցումներին վերաբերող և այլ համապատասխան հիմնավորող փաստաթղթեր.

բ) հարկ վճարողի մոտ ստուգումների և (կամ) ուսումնասիրությունների արդյունքներով արձանագրված ակտիվների արժեքի, ինչպես նաև վաճառքի (իրացման) վերաբերյալ տվյալները (այդ թվում՝ այդ հարկ վճարողի մոտ կատարված այդ ակտիվների հսկիչ գնման արդյունքները), ինչպես նաև *հարկային մարմինն*<sup>\*3)</sup> կողմից սահմանված կարգով իրականացված գույքագրման և չափագրման տվյալները (մասնավորապես, պահեստում և անավարտ արտադրության մեջ ապրանքների, հումքի, կիսապատրաստվածքների մնացորդների, միավոր արտադրանքի արտադրության ծախսի նորմաների և այլ տեսակարար ցուցանիշների, կորստի միջին տոկոսի,

ակտիվների օտարման (վաճառքի և այլն) ինտենսիվությունն արտահայտող ցուցանիշների (այդ թվում՝ իրականացված խրոնոմետրաժով արձանագրված) մասին և այլն)։

զ) սահմանված կարգով երրորդ անձանցից ստացված տեղեկությունները, մասնավորապես՝

- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության *ազգային վիճակագրական ծառայության (այսուհետև՝ ծառայություն)՝*<sup>\*3)</sup> կողմից սույն կարգի կիրառման նպատակով տրամադրված տեղեկատվության տվյալներում արտացոլված ակտիվների իրացման միջին գները։

Սույն ենթակետով նախատեսված աղբյուրների օգտագործման ժամանակ, մինչև *ծառայություն*<sup>\*3)</sup> կողմից հաջորդ ժամանակաշրջանների համար սահմանված կարգով տեղեկությունների տրամադրումը, կիրառվում է նախորդ ժամանակաշրջանի (ժամանակաշրջանների) համար ներկայացված տեղեկատվությունը (բացառությամբ որոշման հավելվածում նշված ապրանքատեսակների), *եթե հաջորդ ժամանակաշրջանի համար ներկայացված տեղեկատվության տվյալներով ակտիվների միջին գներն ավելի բարձր են նախորդ ժամանակաշրջանում (ժամանակաշրջաններում) գործող ակտիվների միջին գներից*<sup>\*2)</sup>։

Վիճակագրական տեղեկությունների օգտագործման ժամանակ հաշվի են առնվում նաև հարկ վճարողի կողմից իրականացվող գործունեության բնույթը (մեծածախ կամ մանրածախ առևտուր, անմիջապես արտադրող, անմիջապես ներմուծող, շահութաբերության (եկամտաբերության) միջին մակարդակ և այլն)։

Սույն աղբյուրի օգտագործման ժամանակ, ելնելով հարկ վճարողի կողմից իրականացնող գործունեության բնույթից, *ծառայություն*<sup>\*3)</sup> կողմից տրամադրված ակտիվների իրացման միջին գների հաշվով, անհրաժեշտության դեպքում (այդ թվում՝ նաև հիմք ընդունելով հարկ վճարողի կողմից բերված այլ աղբյուրների մասին տեղեկությունները), կատարվում են համապատասխան ճշգրտումներ՝ ակտիվների իրացման միջին գները 20 տոկոսի չափով պակասեցնելու միջոցով։

- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքից արտահանվող ակտիվների համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիազորված մարմնի կողմից սահմանված հսկիչ գների մասին տվյալները։

- սեփականաշնորհվող գույքի գնահատման տվյալները։

- *Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի*<sup>\*3)</sup> կողմից ակտիվների արժեքների մասին իրականացված գնահատականները։

- անշարժ գույքի կամ այլ ակտիվների առքուվաճառքով զբաղվող սուբյեկտների (բրոքերներ, մասնագիտացված կոմիսիոն խանութներ, բորսաներ, մասնագիտացված տոնավաճառներ, շուկաներ), լիցենզավորվող գործունեության դեպքում՝ լիցենզիա տրամադրվող պետական կառավարման մարմնի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման կենտրոնի մասնագետների և այլ մասնագիտական (փորձագիտական) եզրակացությունը (գնահատականը)։

- մաքսային մարմինների կողմից մաքսային ձևակերպումների ժամանակ ակտիվների գնահատման գները։

- պետական գումարների և բյուջետային ծախսերի նախահաշվի կազմման ժամանակ հիմք ընդունված գները։

- գնացուցակային (կատալոգային) գները, այդ թվում՝ նաև համապատասխան դեպքերում (մասնավորապես, արտաքին տնտեսական գործունեություն իրականացնելու դեպքում) «Ինտերնետ» համաշխարհային համակարգչային ցանցի միջոցով ստացված տվյալները հաշվի առնելով հարկ վճարողի կողմից իրականացվող գործունեության ժամանակաշրջանը, վայրը, այլ առանձնահատուկ պայմաններ։

- համանման ակտիվի աճուրդային կամ դատական կարգով իրացման ձևավորված նախադեպային տվյալները։

- գործող միջազգային պայմանագրերի հիման վրա այլ երկրների հարկային տեսչություններից և այլ լիազոր մարմիններից հարկ վճարողի ակտիվների, պարտավորությունների կամ գործարքների վերաբերյալ սահմանված կարգով ստացված տեղեկությունները։

- *պետության կամ այլ անձանց շինարարական պատվերների (այդ թվում՝ մրցույթների) շրջանակներում նախատեսված շահույթը,*

- *կապիտալ շինարարության բնագավառում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության լիազորված մարմնի կողմից հաստատված շինարարական նորմերը (չափերը)։*<sup>\*1)</sup>

- *Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի տեղեկությունները՝ տնտեսության տարբեր ճյուղերում գերիշխող դիրք գրավող կազմակերպությունների կողմից իրացված ապրանքանյութական արժեքների իրացման գների վերաբերյալ։*<sup>\*2)</sup>

դ) համանման պայմաններում (գործունեության ոլորտ, մասնագիտացում, շրջանառության ծավալներ, աշխատողների թիվ, գործունեության իրականացված վայր և այլն) գործող այլ

սուբյեկտների կողմից կամ նրանց միջև համապատասխան ժամանակաշրջաններում և համանման հանգամանքներում կիրառված գների ու հարկման համար հիմք հանդիսացող այլ ցուցանիշների մասին տվյալները:

7. Ակտիվների շարժի (օգտագործման) չափերի վերլուծման ժամանակ՝ ակտիվների ավելացումը (աճը) որոշվում է որպես հաշվետու (ստուգվող) ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ ակտիվների արժեքի և հաշվետու (ստուգվող) ժամանակաշրջանի առաջին օրվա դրությամբ ակտիվների արժեքի դրական տարբերություն:

պարտավորությունների նվազման չափը որոշվում է որպես հաշվետու (ստուգվող) ժամանակաշրջանի *առաջին օրվա դրությամբ պարտավորությունների*<sup>\*2)</sup> արժեքի և հաշվետու (ստուգվող) ժամանակաշրջանի *վերջին*<sup>\*2)</sup> օրվա դրությամբ պարտավորությունների արժեքի դրական տարբերություն:

հարկվող օբյեկտի հաշվարկման ժամանակ հաշվի առնվող (կամ չառնվող) նվազեցումների որոշման ժամանակ պարտադիր լրացուցիչ ընդունվում են (հաշվի են առնվում) հարկ վճարողի իրականացրած գործունեության հետևանքով առաջացած բոլոր լրացուցիչ նվազեցումները (ծախսեր, կորուստներ, այլ նվազեցումներ), այդ թվում նաև աշխատանքի վարձատրությանն ուղղված լրացուցիչ միջոցները<sup>\*3)</sup>: Աշխատանքի վարձատրությանն ուղղվող լրացուցիչ միջոցների չափի վերաբերյալ այլ տվյալների և տեղեկությունների (այդ թվում՝ նմանատիպ մասնագիտության վարձատրության վերաբերյալ համանման պայմաններում գործող այլ հարկ վճարողների մոտ) բացակայության դեպքում կարող են հիմք ընդունվել *մեկ աշխատողի հաշվով միջին աշխատավարձի*<sup>\*2)</sup> վերաբերյալ վիճակագրական տվյալների և փաստացի վճարված (հաշվարկված) աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների դրական տարբերության չափը:

8. Այն դեպքում, երբ բացակայում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված հիմնավորող փաստաթղթերը (տեղեկությունները, տվյալները), հարկ վճարողների կողմից ակտիվների՝ այլ հաշվետու ժամանակաշրջանում ձեռքբերման վերաբերյալ, այդ ակտիվները համարվում են ձեռք բերված հաշվետու (ստուգվող) ժամանակաշրջանում:

### **Ենթաբաժին 3.2. Ակտիվների առաջացման աղբյուրների չափի մնացորդի որոշումը և վերլուծումը**

9. Հաշվետու (ստուգվող) ժամանակաշրջանի համար ակտիվների առաջացման աղբյուրների (այլ ակտիվների նվազման, պարտավորությունների ավելացման (աճի), չհարկվող եկամտի (շահույթի) առաջացման հանրագումար) չափի մնացորդի որոշման համար հիմք են ընդունվում հարկ վճարողի ներկայացրած սկզբնական հաշվառմանը, գրանցումներին վերաբերող և այլ համապատասխան հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև սույն կարգի 6-րդ կետում նշված համապատասխան այլ տվյալները:

10. Ակտիվների առաջացման աղբյուրների չափերի վերլուծման ժամանակ՝ ակտիվների նվազման չափը որոշվում է որպես *հաշվետու (ստուգվող) ժամանակաշրջանի*<sup>\*2)</sup> առաջին օրվա դրությամբ ակտիվների արժեքի և հաշվետու (ստուգվող) ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ ակտիվների արժեքի դրական տարբերություն:

պարտավորությունների ավելացման (աճի) չափը որոշվում է որպես հաշվետու (ստուգվող) ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ պարտավորությունների արժեքի և հաշվետու (ստուգվող) ժամանակաշրջանի առաջին օրվա դրությամբ պարտավորությունների արժեքի դրական տարբերություն:

*չհարկվող եկամտի (շահույթի) չափը որոշվում է որպես հաշվետու (ստուգվող) տարվա վերջին օրվա դրությամբ չհարկվող եկամտի (շահույթի) չափի եւ հաշվետու (ստուգվող) ժամանակաշրջանի առաջին օրվա դրությամբ չհարկվող եկամտի տարբերություն (դրական կամ բացասական)*<sup>\*2)</sup>

11. Ակտիվների նվազման կամ պարտավորությունների ավելացման կամ չհարկվող եկամտի (շահույթի) առաջացման վերաբերյալ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված հիմնավորող փաստաթղթերի բացակայության դեպքում ակտիվների նվազումը կամ պարտավորությունների ավելացումը (աճը) կամ չհարկվող *եկամտի*<sup>\*2)</sup> (շահույթի) առաջացումը համարվում է կատարված հաշվետու (ստուգվող) ժամանակաշրջանին նախորդած ժամանակաշրջաններում:

### **Բաժին 4. Հարկվող օբյեկտների և հարկային պարտավորությունների հաշվարկումն ու ձևակերպումը**

12. Սույն կարգի դրույթներին համապատասխան որոշված ակտիվների շարժի (օգտագործման) և ակտիվների առաջացման աղբյուրների չափերի մնացորդների վերլուծության միջոցով որոշված դրական տարբերությունը (ակտիվների շարժի (օգտագործման) չափի մնացորդից հանած

ակտիվների առաջացման աղբյուրների չափի մնացորդը) արտահայտում է հարկ վճարողի իրականացրած գործունեության արդյունքներին համապատասխանող հարկվող օբյեկտի (ներառյալ անուղղակի հարկերը) գնահատական, որի շեղումը հարկ վճարողի ներկայացրած *հաշվարկներում*<sup>\*2)</sup> (հայտարարագրերում) ցույց տրված հարկվող օբյեկտից՝ իրենից ներկայացնում է հարկ վճարողի հարկվող օբյեկտի՝ *հարկային մարմնի*<sup>\*3)</sup> կողմից սույն կարգի դրույթներին համապատասխան իրականացված ճշգրտում (վերագնահատում) համախառն եկամտի ավելացման միջոցով (ներառյալ անուղղակի հարկերը): *Ընդ որում, պետության կամ այլ անձանց պատվերների (այդ թվում՝ մրցույթների) շրջանակներում շինարարություն իրականացնողների կողմից կատարված ծախսերը հարկման նպատակով ընդունվում են փաստացի կատարված ծախսերի չափով, բայց ոչ ավելի, քան այդ պատվերներով (այդ թվում՝ մրցույթներով) նախատեսված ծախսերի (ծախսումների) մեծությունից:*<sup>\*1)</sup>

13. Հաշվետու (ստուգվող ժամանակաշրջանի համար (այդ թվում՝ ստուգման ժամանակ) հարկ վճարողի ներկայացրած հայտարարության (հաշվարկի, հայտարարագրի) մեջ արտացոլված ակտիվների շարժի (օգտագործման) չափը (ակտիվների աճի), պարտավորությունների նվազման, նվազումների (հարկվող օբյեկտի հաշվարկման ժամանակ հաշվի առնվող կամ հաշվի չառնվող) չափի հանրագումարը) սույն կարգով սահմանված ձևով *հարկային մարմնի*<sup>\*2), \*3)</sup> կողմից որոշված ակտիվների շարժի (օգտագործման) չափը գերազանցելու դեպքում ակտիվների շարժի (օգտագործման) չափի մեծությունն ընդունվում է հարկ վճարողի ներկայացրած մեծության չափով:

14. Սույն կարգով սահմանված ձևով հաշվարկված (ճշգրտված, գնահատված, վերագնահատված) համախառն եկամտի հիման վրա հարկային պարտավորությունները (այդ թվում՝ հարկային գործակալի կողմից հարկի հաշվարկման և պահպանման պարտավորության գծով) հաշվարկվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային օրենսդրությամբ նախատեսված ընդհանուր կարգով:

15. Սույն կարգին համապատասխան հաշվարկված հարկվող օբյեկտների և հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման) փաստաթղթավորումը (ծևակերպումը) իրականացվում է *հարկային մարմնի*<sup>\*2), \*3)</sup> կողմից սահմանված ձևով և արտացոլվում (կցվում է) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմվող համապատասխան ակտում:

#### **Քաժին 5. Հարկվող օբյեկտների և հարկային պարտավորությունների հաշվարկման առանձնահատկությունները հաստատագրված վճարներով հարկվող գործունեության ոլորտներում**

16. Հաստատագրված վճարներով *հարկվող*<sup>\*2)</sup> գործունեության այն ոլորտներում, որտեղ հարկվող օբյեկտների և հարկային պարտավորությունների չափը կախված է այդ ոլորտներում գործունեություն իրականացնող հարկ վճարողների ակտիվների շարժի (օգտագործման) ու առաջացման աղբյուրների չափից, ինչպես նաև այն դեպքերում, երբ գործարքները կնքվել (կատարվել) են շահագրգռվածության հիման վրա, հարկվող օբյեկտների և հարկային պարտավորությունների հաշվարկման ժամանակ կարող են կիրառվել սույն կարգի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ *բաժիններով*<sup>\*2)</sup> սահմանված դրույթները:

#### **ՔԱԺԻՆ 6. ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԵԿԱՍՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԻ (ՔԱԶԱՅԻՆ ԵԿԱՍՏԻ) ԵՎ ԵԿԱՍՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ**

17. Սույն կարգը կիրառվում է նաև հարկային մարմինների կողմից աշխատավարձի և դրան հավասարեցված եկամուտների (բազային եկամտի, այսուհետ՝ եկամուտ) և եկամտային հարկի հաշվարկման ժամանակ, երբ ստուգման ժամանակ ի հայտ եկած փաստերի հիման վրա փոփոխվում է եկամտի չափը, որոնց հիման վրա նաև՝ եկամտային հարկի չափը:

18. Յուրաքանչյուր վարձու աշխատողի եկամտային հարկի հաշվարկման համար ելակետային չափերը որոշելու նպատակով իրականացվող վերլուծության ժամանակ կատարվում է՝

ա) գործատուի ակտիվների (գույքի), համախառն եկամտի (հասույթի, իրացման շրջանառության), արտադրության (ծառայությունների, աշխատանքների) ծավալների որոշում՝ սույն կարգին համապատասխան և այդ ծավալներն իրականացնելու համար «մարդ-ժամ» ցուցանիշի որոշում՝ գործող նորմատիվների հիման վրա.

բ) գործատուի կողմից ընդունված (ներկայացված, հրապարակված, տրամադրված, տեղեկացված) հետևյալ տվյալների վերլուծություն՝

գործատուի կողմից ընդունված նախահաշիվներով (մասնավորապես՝ շինարարական), կոնցեսիայի կամ մրցույթի (տեղեղերի) պայմաններով նախատեսված եկամտի, աշխատողների թվի, միջին աշխատավարձի և այլն,

«Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված հաստատագրված վճարներով հարկվող գործունեություն իրականացնող գործատուների կողմից հայտարարված ելակետային տվյալների,

գործատուի կողմից հրապարակված գովազդի (այդ թվում՝ «Ինտերնետ» կապի միջոցով) տվյալների,

գործատուի կողմից հիմնադիրներին (մասնակիցներին) տրամադրված հաշվետվության (այդ թվում՝ կառավարչական) և այլ տեղեկությունների տվյալների,

գործատուի կողմից հարկային մարմիններ ներկայացված հաշվետվությունների, հաշվարկների, հայտարարությունների և տեղեկությունների տվյալների.

զ) օրենքով սահմանված կարգով չափագրման արդյունքների վերլուծություն՝ հաշվի առնելով գործատուի գործունեության առանձնահատկությունները (մասնավորապես, սեզոնայնությունը, ժամանակավոր բնույթը, իրականացման բնակլիմայական պայմանները, շուկայի առաջարկի ու պահանջարկի գործոնը, ցիկլերը).

դ) օրենքով սահմանված կարգով երրորդ անձանցից ստացված տեղեկությունների վերլուծություն, մասնավորապես՝

այլ հարկ վճարողների կողմից հարկային մարմիններ ներկայացված տեղեկությունների, որոնք վերաբերվում են տվյալ գործատուին,

գործատուի վարձու աշխատողներից ստացված հայտարարությունների և բացատրությունների, իրավասու պետական կառավարման մարմիններից ստացված տեղեկատվության՝ տարբեր ոլորտներում (բնագավառներում) վարձու աշխատողների թվի և միջին աշխատավարձի մակարդակի, ներմուծման ծավալների, առանձին ծախսերի (մասնավորապես, էլեկտրաէներգիայի, գազի և ջրի) չափի վերաբերյալ,

գործող միջազգային պայմանագրերի հիման վրա այլ երկրների հարկային մարմիններից և այլ լիազոր մարմիններից տրամադրված տեղեկատվության՝ այդ երկրներում գործատուի իրականացրած գործունեության (գործարքների) վերաբերյալ.

ե) նախորդ հաշվետու (այդ թվում՝ ստուգված) ժամանակաշրջաններում տվյալ գործատուի մոտ հետևյալ ցուցանիշի օգտագործում (հաշվի առնելով գների և արտարժույթի փոխարժեքների փոփոխությունները)՝

մեկ վարձու աշխատողին բաժին ընկնող եկամուտ (հասույթ, իրացման շրջանառություն)՝ վարձու աշխատողների թիվը ճշտելու նպատակով (հաշվի առնելով աշխատանքների մեքենայացման և ավտոմատացման աստիճանը).

զ) համանման պայմաններում (կոնկրետ ճյուղում կամ ոլորտում, նմանատիպ բնակավայրում կամ ներբնակավայրային նույն գոտում) գործող այլ գործատուների մոտ հետևյալ ցուցանիշի օգտագործում՝

մեկ վարձու աշխատողին բաժին ընկնող եկամուտ (հասույթ, իրացման շրջանառություն)՝ վարձու աշխատողների թիվը ճշտելու նպատակով (հաշվի առնելով աշխատանքների մեքենայացման և ավտոմատացման աստիճանը):

19. Եկամտի հաշվարկման համար ելակետային չափերի որոշումը ներառում է կատարված վերլուծության արդյունքների ամփոփումը՝ առաջնահերթությունը վերապահելով սույն կարգի 18-րդ կետի «ա»-«դ» ենթակետերով նախատեսված մեթոդների կիրառմանը: Այդ մեթոդների կիրառման անհնարինության դեպքում կիրառվում են սույն կարգի 18-րդ կետի «ե» և «զ» ենթակետերով նախատեսված մեթոդները՝ պակասեցնելով ստացված արդյունքները (եկամուտը և եկամտային հարկը) 20 տոկոսով:

Տարբեր տվյալների (աղբյուրների) կիրառման ժամանակ իրարից զգալիորեն տարբերվող արդյունքներ ստանալու դեպքում հարկային մարմինն այլ տվյալների (աղբյուրների) օգտագործման անհնարինության (բացակայության) դեպքում իրականացնում է ընտրված տվյալներով (աղբյուրներով) կատարված վերլուծության մեթոդներից յուրաքանչյուրի գնահատում և ընտրում տվյալ հանգամանքներում առավել իրատեսական գնահատականը:

20. Ելակետային չափերի հիման վրա եկամտի և եկամտային հարկի պարտավորությունների հաշվարկումն ու արդյունքների փաստաթղթային ձևակերպումը ներառում է՝

ըստ վարձու աշխատողների, ելնելով հաշվարկված եկամտի չափերից՝ եկամտային հարկի պարտավորությունների հաշվարկումն ու փաստաթղթային ձևակերպումը:

21. Անհատ ձեռնարկատիրոջ եկամտի (բազային եկամտի) գնահատումը կատարվում է սույն կարգին համապատասխան որոշված (հաշվարկված) համախառն եկամտից (բացառությամբ նվազեցվող եկամուտների) և դրա ստացման հետ կապված ծախսերից ելնելով:

Սույն կարգով սահմանված ձևով հաշվարկված համախառն եկամտի (բացառությամբ նվազեցվող եկամուտների) և դրա ստացման հետ կապված ծախսերի տարբերությունից եկամտային հարկի պարտավորությունները հաշվարկվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով:<sup>\*3)</sup>



Ց Ա Ն Կ

Այն ապրանքների (ակտիվների) որոնց՝ սպառողական շուկայում գործող գների վերաբերյալ տեղեկատվությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության *ազգային վիճակագրական ծառայությունը*<sup>\*3)</sup> տրամադրում է ամեն ամսվա յուրաքանչյուր տասն օրվա համար

| NN<br>ը/կ | Ապրանքային ծածկագիրը (կոդ) ըստ ԱՏԳ<br>դասակարգչի                               | Ապրանքի անվանումը             |
|-----------|--|-------------------------------|
| 1         | 2204, 2205, 2206, 2207, 2208   | ալկոհոլային խմիչքներ          |
| 2         | 271000270, 271000290, 271000320, 271000340,<br>271000360, 271000690, 271000700 | նավթ և նավթամթերք             |
| 3         | 1101-1102  | հացահատիկային և այլ<br>ալյուր |

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
աշխատակազմի ղեկավար

Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆ

\*1) ԼՂՀ կառավարության 31.07.06թ. «ԼՂՀ կառավարության 1999թ. սեպտեմբերի 14-ի թիվ 75 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» թիվ 401 որոշման խմբագրությամբ

\*2) ԼՂՀ կառավարության 26.06.07թ. «ԼՂՀ կառավարության 1999թ. սեպտեմբերի 14-ի թիվ 75 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 276 որոշման խմբագրությամբ

\*3) ԼՂՀ կառավարության 05.08.14թ. «ԼՂՀ կառավարության 1999թ. սեպտեմբերի 14-ի N 75 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 511-Ն որոշման խմբագրությամբ